



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23 դեկտեմբերի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ԸՆԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ԸՆԴ ՆԻՍՏԻ

Երևան քաղաքի ավագանու 2009թ. հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետի համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի օրակարգի մնացած հարցերի քննարկումը շարունակվեց 2020 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 11.00-ին:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման 114-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 11.30-ին:

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 34 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, տրանսպորտի, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 22-ի «Գայանե Մելքոմ Մելքոմյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» N299-Ա որոշումը և Երևանի քաղաքապետի 23.12.2020թ. «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» հ.7 արձանագրությունը, օրակարգի նախագծի՝ «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21-րդ հարցը հեղինակ Գայանե Մելքոմ Մելքոմյանի կողմից հանվում է քննարկումից:

13. ԼՄԵՑԻՆ- Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Օվսաննա Հովսեփյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
- 3.Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
- 4.Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը, քաղաքապետի տեղակալ Ս. Ներսեսյանը:

«Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
- 2.Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
- 3.Էդուարդ Ավետիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 92,420,288.7 հազ. դրամ,

բ) ծախսերի գծով՝ 100,776,765.5 հազ. դրամ,

գ) դեֆիցիտը (պակասուրդը) 8,356,476.8 հազ. դրամ:

2) Երևանի 2021 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Երևանի 2021 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4) Երևանի 2021 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի.

5) Երևանի 2021 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 4 հավելվածի.

6) Երևանի 2021 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N5 հավելվածի.

7) Երևանի 2021 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N6 հավելվածի.

8) Սույն որոշման N6 հավելվածով հաստատված հատկացումների վերձանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն N7 հավելվածի:

2. Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի իրականացման համար հատկացնել 5,897,083.0 հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված.

1) առողջության ապահովագրության ծրագրով նախատեսված ծառայությունների ցանկը, շահառուների որոշման չափորոշիչները և իրականացման կարգը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման 114-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստի վերսկսվեց ժամը 14.30-ին:

14. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էոնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N 186-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի.

1) եկամուտների գումարը նվազեցնել 23,482,128.9 հազար դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել 23,482,128.9 հազար դրամով,

2. Որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

15. ԼՄԵՑԻՆ- Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N69-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Ներսեսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Զախարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N69-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» N69-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններ և լրացում՝

1) Որոշման և Որոշման N2 հավելվածի վերնագրերում ու ամբողջ տեքստում «բաժնեմաս ունեցող կազմակերպությունների» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների» բառերով և դրանց հոլովածներով.

2) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Կանոնադրական կապիտալում Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և համայնքի բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:»

3) Որոշման 1-ին կետը լրացնել 4-րդ ենթակետով.

«4) Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից ավելի համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից համայնքային բաժնեմասից ստացված տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի հաշվարկի ձևը՝ համաձայն N4 հավելվածի:»

4) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «զուտ շահույթի» բառերը փոխարինել «շահութաբաժինների հաշվարկման բազայի» բառերով:

5) Որոշման N1 և N3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2. Սույն որոշումը կիրառվում է 2020 թվականի և հաջորդ տարիների գործունեության արդյունքում առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման գործընթացների նկատմամբ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ` 33, դեմ` 0, ձեռնպահ` 0

Որոշումն ընդունվել է միաձայն

16. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի անդամ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի հ.60 հասցեում գտնվող «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 5650.0 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ` 27, դեմ` 0, ձեռնպահ` 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

17. ԼՍԵՑԻՆ- Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի անդամ Գայանե Եղիազարյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ Կորյուն Գալստյանին, Հաբեթ Սարգսյանին, Ալլա Կարագոդինային և Նունե Գուլակյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով

պատկանող Նորաշեն թաղամասի հ.37/8 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 209.96քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30082017-01-0026 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն «Ձոր-2» թաղամասում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 136.47քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ` 30, դեմ` 0, ձեռնպահ` 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

18. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագիրը` համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման, այդ թվում` սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքից.

3) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, համայնքային և (կամ) պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված և համայնքային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N 682 որոշումներին համապատասխան.

5) հողամասերն անհատույց օգտագործման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով, բացառությամբ` օրենսդրությամբ

նախատեսված դեպքերի: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական.

6) հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման համար հողամասերի ուղղակի վաճառքի դեպքում ձեռք բերողների համար կարող է սահմանվել նաև տարածամկետ վճարման իրավունք.

7) հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում է հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

19. ԼՍԵՑԻՆ - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արթուր Իսախրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձին՝ 2021 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 28, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

20. ԼՍԵՑԻՆ - Ա/Ձ Ռոբերտ Սիմոնյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը տեղեկացրեց, որ «Ա/Ձ Ռոբերտ Սիմոնյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Ա/Ձ Ռոբերտ Սիմոնյանին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 25, դեմ` 1, ձեռնպահ` 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

21. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N88-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N88-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը հաստատելու մասին» N 88-Ն որոշման հավելվածի 8-րդ գլխի 31-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ`

«31. Համայնքային գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել`

1) պետությանը.

2) հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և այլ ոչ առևտրային կազմակերպություններին.

3) միջազգային կազմակերպություններին.

4) քաղաքացիներին:»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 33 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` 31, դեմ` 1, ձեռնպահ` 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշվեց Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 1-ին նիստը գումարել 2021 թվականի փետրվարի 9-ին, ժամը 11.00-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ